ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 29-Ն	*Տեսակը*	Ինկորպորացիա
Տիպը	Հրաման	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀԳՏ 2007.03.15/8(248) Հոդ.119	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	Կրթության և գիտության նախարար	*Ընդունման ամսաթիվը*	26.01.2007
Ստորագրող մարմինը	Կրթության և գիտության նախարար	*Ստորագրման ամսաթիվը*	26.01.2007
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	25.03.2007	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԽՄԲԵՐԻ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ, ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
2 մարտի 2007 թ.
Պետական գրանցման թիվ 11007105

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

N 29-Ն

26 հունվարի 2007 թ.
ք. Երևան

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԽՄԲԵՐԻ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ, ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի, 11-րդ հոդվածի 2-րդ կետի և 30-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝ ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների հաստիքների, խմբերի խտության, նորմատիվների կարգավորման նպատակով.

Հրամայում եմ՝

1. Հաստատել ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները (համաձայն 1, 2 հավելվածների):
2. ՀՀ պետական և համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում գոյություն ունեցող հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները համապատասխանեցնել սույն օրինակելի հաստիքացուցակին:
3. Սահմանել, որ ոչ պետական նախադպրոցական ուսումնական հաստատությունների կամ նախադպրոցական

կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների համար սույն հաստիքացուցակը, խմբերի խտությունը և նորմատիվները ունեն կողմնորոշիչ ֆունկցիա:

4. ՀՀ ԿԳՆ հանրակրթության վարչությանը (պետ՝ Ն. Հովհաննիսյան), օրենսդրության և իրավաբանական վարչությանը (Մ. Գրիգորյան)՝ 10-օրյա ժամկետում, սահմանված կարգով ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Բ. Եսայանին:

Նախարար՝ **Լ. Մկրտչյան**

Հավելված 1
ՀՀ ԿԳ նախարարի
26 հունվարի 2007 թ.
N 29-Ն հրամանի

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿ

N	Պաշտոնի անվանումը		Հաստիքային միավորների քանակը՝ կախված խմբերի թվից										
		1 խումբ	2 խումբ	3 խումբ	4 խումբ	5 խումբ	6 խումբ	7 խումբ	8 խումբ	9 խումբ	10 խումբ	11 խումբ	12 խումբ
1.	Տնօրեն	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
2.	Մեթոդիստ ուս.գծով տնօրենի տեղակալ	0.25	0.25	0.5	1	1	1	1	1	1	1,25	1,25	1,25
3.	Բուժքույր	0.5	0.5	0.75	0.75	1	1	1	1	1	1	1	1
4.	Գլխ. հաշվապահ	0.5	0,5	0,5	0.5	1	1	1	1	1	1	1	1
6.	Տնտեսվար	0.25	0.5	0.5	0.5	0.5	0.5	1	1	1	1	1	1
7.	Պահեստապետ	-	-	-	-	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,51	0,5	0,5
8.	Գործավար	-	-	-	-	0.25	0.25	0.5	0.5	0.5	1	1	1
9.	Շեֆ խոհարար	-	-	-	-	-	-	-	--	-	1	1	1
10.	Խոհարար	1	1	1	1	1	1	2	2	2	2	2	2
11.	Խոհարարի օգնական	0.5	0.5	0.5	1	1	1	1	1	1	1	1	1
12.	Օժանդակ բանվոր	0.25	0,5	0,5	0,5	0,5	0.5	1	1	1	2	2	2

14.	Դերձակ	-	0.25	0.25	0.25	0.25	0.25	0.25	0.25	0.25	0.25	0.25	0.25
15.	Լվացարար (շուրջօրյա հաճախում ունեցող մանկապարտեզում)	-	0,75	1	1	1,5	2	2,25	2,5	2,5	2,5	3	3
16.	Լվացարար	-	0.25	0.25	0.25	0.25	0.25	0.25	0.25	0.25	0.25	0.25	0.25
17.	Հավաքարար	0.5	0.5	0.5	0.5	0,5	0,5	0,5	1	1	1	1	1

18. Ինքնուրույն կենտրոնական ջեռուցում (ջրի, գազի, գոլորշու) ունեցող մանկապարտեզներում ջեռուցման սեզոնում սահմանվում է հնոցապանի հաստիք, յուրաքանչյուր հերթափոխի համար մեկ դրույքի հաշվով: Հնոցապանների ընդհանուր թվից մեկ միավոր սահմանվում է ամբողջ տարվա համար:

19. Կենտրոնացված ջերմամատակարարման (ՋԷԿ) դեպքում ջերմային կետ կամ էլևատոր ունեցող մանկապարտեզներում սահմանվում է փականագործ-էլեկտրամոնտյորի մեկ հաստիք, իսկ բոյլերի և պոմպի դեպքում, երբ պահանջվում է շուրջօրյա հերթապահություն, սահմանվում է փականագործ-էլեկտրամոնտյորի հաստիք, յուրաքանչյուր հերթափոխի համար մեկ միավորի հաշվով:

20. Սառնարանային սարքավորում, էլեկտրասալիկ և այլ էլեկտրական ջեռուցման սարքավորումների առկայության դեպքում 4 և ավելի խումբ ունեցող մանկապարտեզներում (եթե հաստիքներում չի նախատեսված փականագործ-էլեկտրամոնտյորի հաստիք) սահմանվում է 0,5 միավոր փականագործ-էլեկտրամոնտյորի հաստիք:

21. Ինքնուրույն շենք և երկու և ավելի խումբ ունեցող մանկապարտեզներում սահմանվում է դռնապանի հաստիք. դռնապանի հաստիքը սահմանվում է մաքրման ենթակա 1000-2000մ^2 տարածության համար՝ 1 միավոր:

22. Մրգի այգի կամ դեկորատիվ տնկիներ ունեցող 1,5 հա մակերեսից ոչ պակաս դեկորատիվ բուսականությամբ հողամաս ունեցող մանկապարտեզներում սահմանվում է այգեպանի հաստիք՝ 1 միավոր՝ յուրաքանչյուր 1.5 հա մակերեսի համար:

23. Պահակի հաստիքը սահմանվում է օրենքով սահմանված կարգով:

24. Ավտովարորդի հաստիքային 1 միավոր կարող է սահմանվել ավտոտրանսպորտի առկայության դեպքում:

25. Երաժշտական ղեկավար (երաժշտության դաստիարակ) մանկապարտեզի՝ 2 տարեկան և ավագ հասակի երեխաների յուրաքանչյուր խմբին 0,25 դրույք:

26. Ֆիզկուլտուրայի հրահանգիչ մանկապարտեզի՝ 4 տարեկան և ավագ նախադպրոցական հասակի երեխաների յուրաքանչյուր խմբին՝ 0,25 դրույք:

27. Լողի մարզիչի հաստիք (լողավազանի առկայության դեպքում) մանկապարտեզի՝ 4 տարեկան և ավագ նախադպրոցական հասակի երեխաների յուրաքանչյուր երկու խմբի համար՝ 0,25 դրույք:

28. Պարուսույց՝ պարի խմբավար (հիմնադրի կողմից լրացուցիչ բյուջետային միջոցների կամ հաստատության արտաբյուջեի առկայության դեպքում) մանկապարտեզի՝ 4 տարեկան և ավագ նախադպրոցական հասակի երեխաների յուրաքանչյուր խմբին՝ 0,25 դրույք:

29. Մանկապարտեզներում, որտեղ տարիքային խմբերում ընդգրկված են նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, հիմնադրի կողմից սահմանվում է լրացուցիչ՝ հատուկ մանկավարժ(ներ)ի (սուրդոմանկավարժ, լոգոպեդ, հոգեբան և այլն) մինչև 2 միավոր հաստիք:

30. Նախադպրոցական ուսումնական հաստատություններում պետք է սահմանվեն արձակուրդում գտնվող աշխատակիցների փոխարինողների հաստիքներ՝ պայմանագրային կարգով՝ փոխարինող անձանց վճարման համար նախատեսված հատկացումների սահմաններում:

31. Սույն հավելվածով սահմանված հաստիքային միավորները պարտադիր նվազագույնն են: Հիմնադրի կողմից լրացուցիչ բյուջետային միջոցների կամ հաստատության արտաբյուջեի առկայության դեպքում կարող են տրամադրվել լրացուցիչ հաստիքներ:

ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԹԻՎԸ 1 ԽՄԲԻ ՀԱՇՎԱՐԿՈՎ

N	Նախադպրոցական խմբեր Պաշտոնի անվանումը	6-օրյա աշխատանքային շաբաթի դեպքում					5-օրյա աշխատանքային շաբաթի դեպքում			
		8 ժամ	9 ժամ	10 ժամ	12 ժամ	24 ժամ	8 ժամ	9 ժամ	10,5 ժամ	12 ժամ	24 ժամ
1.	Դաստիարակ	1,17	1,5	1,67	2	2,2	1,12	1,25	1,55	2	2
2.	դաստիարակի օգնական	1	1,25	1,25	1,5	1,5	1	1,1	1,15	1,25	1,5
3.	Մտուրային խմբեր (Վաղ տարիքի առաջին, երկրորդ, կրտսեր տարիքի առաջին խմբեր) դաստիարակ դաստիարակի օգնական	8 ժամ 1,4, 1,3,	9 ժամ 1,5 1,33	10,5 ժամ 1,67 1,45	12 ժամ 2 1,75	24 ժամ 3.6 2,75	8 ժամ 1,12 1	9 ժամ 1,25 1,1	10,5 1,55 1,3	12 ժամ 2 1,5	24 ժամ 3 2,5

(հավելվածը խմբ. 16.11.17 N 1318-Ն)

Հավելված 2
ՀՀ ԿԳ նախարարի
26 հունվարի 2007 թ.
N 29-Ն հրամանի

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ

	ՑՈՒՑԱՆԻՇԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹԻՎԸ
1.	Ընդհանուր նշանակության նախադպրոցական հաստատություններում(մանկապարտեզներում, որտեղ իրականացվում են նախադպրոցական կրթական ծրագրեր և ապահովվում է երեխաների խնամքը) մինչև 1 տարեկան 1-ից 3 տարեկան 3-ից 6 տարեկան	 10-15 15-20 25-30

2.	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ֆիզիկական և հոգեկան զարգացման շտկողական աշխատանքների կարիք ունեցող) երեխաների թվի ծանրաբեռնվածության առավելագույն խտությունը սահմանվում է՝ մինչև 1 տարեկան 1-ից 3 տարեկան 3-ից 6 տարեկան	 1 երեխա մինչև 2 երեխա մինչև 3 երեխա
3.	Թույլատրվում է ազգային փոքրամասնության երեխաներով խմբերի գործարկումը թերկոմպլեկտավորված համակազմի խտությամբ:	8-10

4. Ելնելով տեղական պայմաններից և առանձնահատկություններից, հիմնադրի կողմից կարող են սահմանվել երաշխավորվածից ցածր խտությամբ խմբեր՝ հիմնադրի կողմից լրացուցիչ բյուջետային միջոցների կամ հաստատության արտաբյուջեի առկայության դեպքում:

5. Թույլատրվում է սահմանամերձ գոտում, գյուղական, բարձրադիր և հեռավոր վայրերում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից խմբերի համալրման կարգում կիրառել տարբերակված մոտեցում՝ ելնելով բնակչության պահանջարկի հաշվարկից և համայնքի բյուջեի հնարավորություններից:

(հավելվածը խմբ. 16.11.17 N 1318-Ն)